

Օրհուսի ու Էսպոյի Կոնվենցիաները և ՀՀ ընդերքօգտագործման օրենսդրությունը, բացեր և առաջարկվող փոփոխություններ

Aarhus and Espoo Conventions and the RA Mining Legislation, gaps and developments

Վերլուծություն հանքարդյունաբերության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ոլորտում ընթացիկ օրենսդրական դաշտի՝ Ընդերքի մասին օրենսգրքի ու ՇՄԱԳՓ օրենքի միջազգային պարտավորությունների հետ համապատասխանեցման ու բարելավման նպատակով:

Հայաստանի ինտեգրումը տարածաշրջանային և միջազգային համագործակցության տարբեր կառույցներում երկրի առջև դնում է նոր պարտավորություններ շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության տեսանկյունից, այդ թվում նաև կառավարման և մոնիթորինգի իրականացման մեխանիզմների ստեղծումն ինչպես երկրի սահմանների ներսում, այնպես էլ անդրսահմանային տարածքներում՝ գնահատելու վտանգավոր և թունավոր թափոնների ազդեցությունը: Վերջիններս բխում են Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններից, հատկապես Օրհուսի (1998) և Էսպոյի (1991) Կոնվենցիաներից:

Էսպոյի (շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը) և Օրհուսի (շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը, որոշումների կայացման գործընթացներում հասարակայնության մասնակցությունը և արդարադատության մատչելիությունը) կոնվենցիաների շրջանակներում իրականացվել և դեռևս շարունակվում են իրականացվել օրենսդրական դաշտի համապատասխան փոփոխություններ: Նշվածում հատկապես կարևորելով հանրության մասնակցությունը և իրազեկվածության մակարդակի բարձրացումը, շատ կարևորվում է համապատասխան միջոցառումների իրականացումը, ինչն իսկապես կարող է բերել նախ մարդկանց գիտակցական մակարդակի բարձրացմանը շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունն ընկալելու և հասկանալու համար, այնուհետև կբարձրացնի նրանց մասնակցությունը համապատասխան որոշումների կայացման գործընթացներում: Կարևոր է նաև շրջակա միջավայրի պահպանության հայեցակարգերի ու քաղաքականության մշակումն ու անցում կատարել էկոլոգիական տնտեսությանը, դա կլինի թե հանքարդյունաբերության, թե ջրային ռեսուրսների օգտագործման ոլորտներում, թե ցանկացած այլ տնտեսական ոլորտում՝ զարգացնելով տնտեսության տվյալ ճյուղը և միաժամանակ պահպանելով շրջակա միջավայրն ու ձեռնարկելով քայլեր զարգացնելու շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների ցանկը:

Շրջակա միջավայրի պահպանության կառավարման ներկայիս խնդիրները պահանջում են ՇՄԱԳ (գնահատում) և այդ ազդեցության նվազեցման, ռիսկերի գնահատման, կառավարման և կանխարգելման համար էլ առավել թափանցիկ ինստիտուցիոնալ կառուցվածքներ, միջոլորտային համագործակցություններ:

Օրհուսի Կոնվենցիան (1998), ՇՄ վերաբերյալ տեղեկատվության հասանելության/մատչելիության, որոշումների կայացման գործընթացներում հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին է, ՀՀ վավերացվել է 2001 թ.-ին:

Էսպոյի կոնվենցիան (1991, ուժի մեջ է մտել 1997-ին) Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին է, որը Հայաստանը վավերացրել է 1997-ին: Այն սահմանում է կողմերի պարտավորությունները՝ պլանավորման վաղ փուլում որոշակի գործունեության ՇՄ վրա ազդեցությունը գնահատելու համար, ինչպես նաև պետությունների ընդհանուր պարտավորությունը՝ միմյանց տեղեկացնելու այն բոլոր խոշոր

ծրագրերի վերաբերյալ, որոնք կարող են զգալի էկոլոգիական ազդեցություն ունենալ երկրների սահմաններից դուրս:

ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԵՆԹԱՏԵՔՍՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1 / ՆՊԱՏԱԿԸ

Սույն Արձանագրության նպատակն է **ապահովել շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության պահպանման բարձր մակարդակը** հետևյալ կերպով.

ա) ապահովել, որ շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջությանն առնչվող նկատառումները լիակատար ձևով **հաշվի առնվեն պլաններ և ծրագրեր մշակելիս,**

բ) նպաստել, որ շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջությանն առնչվող նկատառումները **ընդգրկվեն քաղաքականություն և օրենսդրություն մշակելիս,**

գ) ստեղծել պարզ, թափանցիկ և արդյունավետ ընթացակարգեր ռազմավարական էկոլոգիական գնահատման համար,

դ) ապահովել ռազմավարական էկոլոգիական գնահատմանը հանրության մասնակցությունը

ե) այս միջոցներով շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջությանն առնչվող խնդիրներն ընդգրկել կայուն զարգացման համար նախատեսված հետագա միջոցառումներում և գործիքներում:

Հոդված 4 / ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

2. Ռազմավարական էկոլոգիական գնահատումն իրականացվում է այն պլանների և ծրագրերի համար, որոնք մշակվում են գյուղատնտեսության, անտառային տնտեսությունների, ձկնաբուծության, էներգետիկայի, **արդյունաբերության համար, ներառյալ հանքարդյունաբերությունը,** տրանսպորտը, տարածաշրջանային զարգացումը, **թափոնների կառավարումը, ջրի կառավարումը,** հեռահաղորդակցությունը, զբոսաշրջությունը, քաղաքային և համայնքային տարածքների նախագծումը կամ հողօգտագործումը, և որոնք սահմանում են I Հավելվածում թվարկված նախագծերի հետագա իրագործման համար համաձայնություն ձեռք բերելու հիմքերը, և II Հավելվածում թվարկված այն նախագծերի համար, որոնք տվյալ երկրի օրենսդրությամբ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում են պահանջում:

ՀՀ Կառավարության կողմից 2004 և 2011 թթ. ընդունվել են որոշումներ մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ ՀՀ պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկի հաստատման մասին:

ՀՀ կառավարության 10.11.2011 Ն 1594-Ն որոշմամբ այս երկու կոնվենցիաների մասով մինչև 2016 թ. ավարտը նշված են մի շարք գործողություններ, որոնց կատարման պատասխանատու պետական մարմինը ՀՀ ԲՆ-ն.

Էսայոյի կոնվենցիա. Հոդված 2.2, 2012—2016թթ.

2. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական, վարչական և այլ միջոցներ սույն Կոնվենցիայի դրույթների կենսագործման համար, ներառյալ 1-ին հավելվածում թվարկված՝ զգալի վնասակար անդրսահմանային ազդեցություն ներգործող պլանավորված գործունեության այն տեսակների համար՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման այնպիսի ընթացակարգի սահմանումը, որը կնախատեսի հանրության մասնակցությունը, ինչպես նաև 2-րդ հավելվածով նախատեսված՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հետ կապված փաստաթղթերի պատրաստումը:

Էսպոյի կոնվենցիայի և «Ռազմավարական Էկոլոգիական գնահատման մասին» արձանագրության վերաբերյալ հասարակության իրազեկության մակարդակի բարձրացման նպատակով

- Էսպոյի կոնվենցիայի և «Ռազմավարական Էկոլոգիական գնահատման մասին» արձանագրության վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացման նպատակով միջոցառումների իրականացում
- Տարեկան մեկ անգամ շահագրգիռ կազմակերպությունների, ՀԿ-ների հետ կոնվենցիայի և արձանագրության հարցերով կլոր սեղանների կազմակերպում

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և ռազմավարական Էկոլոգիական գնահատման բնագավառում կադրերի վերապատրաստման նպատակով

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և ռազմավարական Էկոլոգիական գնահատման բնագավառում ուսումնական դասընթացների կազմակերպում

կոնվենցիայի գործնական կիրառման նպատակով

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հզորությունների զարգացման վերաբերյալ պիլոտային ծրագրի իրականացում

Օրհուսի կոնվենցիայի մասով, հիմնականում 2012-2014 թթ., նաև շարունակական մինչև 2016 թ.-ը (ՀՀ ԲՆ և ԵՊՀ Էկոիրավունքի կենտրոն)

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի կատարելագործում՝ հասարակայնության մասնակցության ընթացակարգի հստակեցում

նախատեսվող գործունեության, ինչպես նաև շրջակա միջավայրին առնչվող պլանների, ծրագրերի և քաղաքականության վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացի մասնակիցների իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման ընթացակարգերի հստակեցում

- **«Էկոլոգիական տեղեկատվություն տնօրինողների կողմից մշակված կամ նրանց առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և այն ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելը**

շրջակա միջավայրի պահպանության ընթացքում տեղեկատվության կառավարման կապակցությամբ առաջացող հարաբերությունների որոշակի խմբի իրավական կարգավորում՝ տեղեկությունների գրանցում, դասակարգում և պահպանում

- **«Էկոլոգիական տեղեկատվություն հավաքելու և տարածելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և այն ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելը**

ազգային օրենսդրության մակարդակում Էկոլոգիական տեղեկատվության հավաքագրման և տարածման հարաբերությունների ամբողջական կարգավորման համար իրավական մեխանիզմների ստեղծում

- **Հասարակայնությանը մատչելի տեղեկատվության էլեկտրոնային բազաների համալրում**

Էլեկտրոնային բազաների համալրում նոր, հանրամատչելի և համակողմանի տեղեկատվությամբ՝ շրջակա միջավայրի և դրա բաղադրամասերի վերաբերյալ

- **Կոնվենցիայի գործողության ոլորտին առնչվող նյութերի հրատարակում**

հասարակության տարբեր խմբերի իրազեկում՝ մարդու էկոլոգիական իրավունքների և դրանց իրացման հիմնախնդիրների մասին

- **ՀՀ բնապահպանության նախարարության ինտերնետային կայքի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության վերաբերյալ բաժնի կատարելագործում**

շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված գործունեության վերաբերյալ հասարակայնության համար մատչելի և մշտապես թարմացվող տեղեկատվական բազայի ստեղծում

- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում

պաշտոնատար անձանց կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ոլորտում իրենց պաշտոնական պարտականությունների պատշաճ կատարման ապահովում

- Դատավորների և դատավորի պաշտոնի թեկնածուների համար էկոլոգիական իրավունքի և Օրհուսի կոնվենցիայի վերաբերյալ պարբերական դասընթացների կազմակերպում և անցկացում

իրավակիրառ պրակտիկայի բարելավում, դատավորների և դատավորի պաշտոնի թեկնածուների իրազեկվածության մակարդակի բարձրացում

Արդյունքում 2014 թ.-ին ընդունվեց ՀՀ ՇՄԱԳՓ օրենքը, որին մինչև 2016-ը հաջորդեցին բազմաթիվ որոշումների և համապատասխան կարգերի ընդունումը:

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունն ունեցող հիմնադրությային փաստաթուղթ մշակող, ընդունող կամ նախատեսվող գործունեություն իրականացնող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված սուբյեկտների վրա:

Սակայն մինչ օրս չկա ընդունված մարդու առողջության վրա ազդեցության գնահատման, դրանց փորձաքննության անցկացման և այլ կարգավորումների համապատասխան մեխանիզմներ:

- **ՀՀ Կառ. Որոշում Հ1325-Ն 19.11.2014 Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին**

15. Հանրությունը կարող է գրավոր դիտողություններ և առաջարկություններ ներկայացնել՝

1) նախնական փորձաքննության փուլում՝ ծանուցումից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում.

2) նախնական գնահատման, հիմնական գնահատման և հիմնական փորձաքննության փուլերում՝

ա. հիմնադրությային փաստաթղթի և Ա կատեգորիայի գործունեության տեսակների համար՝ ծանուցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում,

բ. Բ կատեգորիայի համար՝ ծանուցումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում,

գ. Գ կատեգորիայի (նախնական գնահատման փուլ) համար՝ ծանուցումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

17. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության փուլերում փորձաքննական կենտրոնն իր պաշտոնական կայքում տեղադրում է հիմնադրությային փաստաթղթին կամ նախատեսվող գործունեությանն առնչվող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները և ոչ տեխնիկական լեզվով գրված փաստաթղթերի ամփոփ բովանդակությունը:

- **ՀՀ Կառ. Որոշում Հ399-Ն 9.04.15 – Հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ՇՄԱ Փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին**

4. Հիմնադրությային փաստաթղթերի փորձաքննության դեպքում գործընթացում ներգրավվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, որի կողմից տրվում է եզրակացություն կամ կարծիք: (դեռևս չի իրականացվում)

6. Փորձաքննության նախնական փուլում փորձաքննության է ենթարկվում ձեռնարկողի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը: **Ձեռնարկողի կողմից փորձաքննության են ներկայացվում փաստաթղթի թղթային և էլեկտրոնային տարբերակները:**

8. Փորձաքննության հիմնական փուլում փորձաքննության է ենթարկվում ձեռնարկողի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին հաշվետվությունը: Ձեռնարկողի կողմից փորձաքննության են ներկայացվում փաստաթղթի թղթային և էլեկտրոնային տարբերակները:

- ՀՀ Կառ. Որոշում Հ-428-Ն 22.05.2015 – Փորձաքննական եզրակացության ուժը կորցրած ճանաչելու կարգը սահմանելու մասին
- ՀՀ Կառ. Որոշում Հ-764-Ն 27.05.15 – ՇՄ վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին
- ՀՀ ԲՆ 26.05.2016 Հ-121-Ն հրամանը Բնության և ՇՄՊ բնագավառում ՀՀ մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին
- ՀՀ ԷԲՊՆ 30.12.2011 Հ249-Ն հրամանը Ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացվող բնության ՇՄԱ նախնական գնահատմանը, ԲՇՄԱ գնահատմանը և հանքի փակման ծրագրին ներկայացվող պահանջների մասին,

ԱՆԴՐՄԱՀՄԱՆԱՅԻՆ ԵՆԹԱՏԵՔՍՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԷՄՊՈՅԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

1. ՇՄԱԳ համար, անդրսահմանային ենթատեքստում, հարկավոր է հաշվետվություններում հաշվի առնել Էսպոյի կոնվենցիայի 4-րդ հոդվածի, այն է ՇՄԱԳ փաստաթղթերի պատրաստումը և դրանից բխող 2-րդ հավելվածի պահանջները, որոնք վերաբերվում են այդ փաստաթղթերի բովանդակությանը:

Համաձայն 4.1 կետի ՇՄԱԳ փաթեթը պետք է պարտադիր պարունակի 2-րդ հավելվածում պահանջվող տեղեկատվությունը

1. Նախատեսվող գործունեության նկարագրությունն ու նպատակները
2. Այլընտրանքների նկարագրություն, այդ թվում նաև գործունեությունից հրաժարման տարբերակի
3. ՇՄ տարրերի նկարագրություն, որոնք ենթարկվելու են նախատեսվող գործունեության ազդեցությանը կամ նրա այլընտրանքային գործունեությունների ազդեցությանը

4. ՇՄ վրա ազդեցության հնարավոր տեսակների նկարագրությունն ու դրանց մասշտաբների գնահատումը
5. ՇՄ վրա բացասական ազդեցության նվազեցման, դրան նվազագույնին հասցնելուն ուղղված միջոցառումների նկարագրությունը
6. Կանխատեսման մեթոդների և դրանց հիմքում ընկած ելակետային դրույթների, այդ թվում նաև համապատասխան օգտագործված ՇՄ վերաբերյալ տվյալների կոնկրետ նկարագրություն
7. Պահանջվող տեղեկատվության պատրաստման ընթացքում ի հայտ եկած անհայտությունների և գիտելիքների բացերի պարզապահում
8. Անհրաժեշտության դեպքում նախագծային վերլուծությունից հետո մոնիթորինգի ծրագրի և բոլոր ծրագրերի կառավարման համառոտ բովանդակությունը
9. **Ոչ տեխնիկական բնույթի համառոտագիր, անհրաժեշտության դեպքում նյութերի մատչելի պատկերացման համար տեսապատկերման միջոցների կիրառությամբ (քարտեզներ, գրաֆիկներ, աղյուսակներ և այլն)**

2. Ծագման Կողմը ազդեցության ենթարկված Կողմին, համապատասխան կերպով՝ համատեղ մարմնի միջոցով, եթե այդպիսին գործում է, ներկայացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը: Շահագրգիռ Կողմերն ապահովում են այդ փաստաթղթերի տարածումը ազդեցության ենթարկված Կողմի մարմինների և հանրության միջև այն տարածքներում, որոնք, ամենայն հավանականությամբ, ազդեցության կենթարկվեն, ինչպես նաև դիտողությունների ուղղակիորեն կամ, անհրաժեշտության դեպքում, ծագման Կողմի միջոցով փոխանցումը ծագման Կողմի իրավասու մարմնին՝ մինչև պլանավորված գործունեության վերաբերյալ վերջնական որոշման ընդունումը հարմար ժամկետներում:

ՀՀ-ում ընդերքից օգտակար հանածոների արդյունահանումն իրականացվում է և վերահսկվում է լիազոր մարմնի կողմից՝ ՀՀ ԷԵԲՊՆ: Վերջինիս կազմում ստեղծված են համապատասխան ստորաբաժանումներ՝ Ընդերքի պետական տեսչություն, Ընդերքի տրամադրման գործակալություն, ՕՀ պաշարների գործակալություն, ինչպես նաև Հանրապետական երկրաբանական ֆոնդը: Նրանցից յուրաքանչյուրը համաձայն ԸՄ Օրենսգրքի և իրենց համար հաստատված կանոնադրությունների իրականացնում են հանքարդյունահանման նպատակներով ընդերքի տեղամասերի արդյունահանման թույլատվությունների տրամադրման, փորձաքննությանն ու վերահսկողության և իհարկե հաշվետվողականության գործընթացները: Դրան զուգահեռ իր որոշակի և հանքարդյունահանման թույլտվությունների տրամադրման գործընթացներում ուրույն նշանակությունն ունի ՀՀ ԲՆ, հանձնիս Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ-ի, որն էլ իրականացնում է արդյունահանման նախագծերի ՇՄԱԳ փորձաքննությունը: Ավելացնենք նաև, որ վերջինիս պատասխանը վերջնական և որոշիչ է թույլտվության ստացման համար: Հանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և ոլորտի կառավարման մեջ իր ուրույն նշանակությունն ունի հանքարդյունաբերական գործունեության ազդեցության գնահատումը շրջակա միջավայրի վրա:

ՇՄԱԳ փորձաքննությունը, որը բծում է վերը նշված Կոնվենցիաների անմիջական պահանջներից, ըստ էության իրենից ներկայացնում է հանքարդյունաբերական գործունեության թույլտվության ստացման 1/3 մասը: Արդյունքում, ապահովելով միայն ՇՄԱԳՓ գործընթացներում հանրության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում և տեղեկատվության մատչելիությունը, ըստ էության բաց ենք թողնում հարցի մյուս և ոչ պակաս կարևորագույն կողմը, որը ամենագլխավոր և էական

ազդեցությունը կարող է ունենալ ՇՄՊ տեսանկյունից. Խոսքը վերաբերվում է ընդերքաբանական փորձաքննության մասին:

Ընդերքի ռեսուրսները հանդիսանում են շրջակա միջավայրի անբաժանելի բաղադրիչներից մեկը:

Ընդերքաբանական և ՇՄԱԳ փորձաքննության անցկացման հարցերը

ՀՀ-ում լեռնահանքային արդյունաբերական ոլորտում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է և կարգավորվում է համաձայն ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի (ԼՄՕ) և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (ՇՄԱԳՓՕ) և վերջիններիս հիման վրա ընդունված ենթաօրենսդրական փաստաթղթերի, ինչպես նաև միջազգային ընդունված կարգերի:

ՇՄԱԳ փորձաքննության անցկացման, բնական ռեսուրսների ու շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության բարելավման գործընթացներին նպաստելու նկատառումներով, ուսումնասիրվել են ինչպես նախկինում ներկայացված, այնպես էլ նոր ՇՄԱԳ հաշվետվությունների փաթեթներն ու ՇՄԱ փորձաքննական եզրակացությունները: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել օգտակար հանածոների արդյունահանման ծրագրային փաթեթներին, որոնք առավել ռիսկային են քան երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքային նախագծերի ՇՄԱԳ փաթեթները:

Այսօր կփորձենք հակիրճ ներկայացնել կատարված ուսումնասիրությունների արդյունքում ներկայացված փաստաթղթային փաթեթներից դուրս բերված այն բացթողումներն ու թերությունները, որոնք խոչընդոտում են բնապահպանական խնդիրների լուծմանն ու շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանը և կփորձենք գտնել ձանապարհներ վերհանված խնդիրների լուծման համար:

Ընդերքը, այդ թվում նրանում պարփակված օգտակար հանածոները – հանքային ռեսուրսները, հանդիսանալով շրջակա միջավայրի բաղկացուցիչ մաս, պահանջում է պարտադիր պահպանություն ու ռացիոնալ օգտագործում և համապատասխանաբար ընդերքօգտագործման ոլորտում ցանկացած գործունեություն չի կարող զուրկ լինել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումից: Այս դեպքում ազդեցության գնահատումը ենթադրում է ոչ միայն շրջակա միջավայրի հիմնական բաղադրիչների (ջուր, հող, օդ) վրա անզմիջական ազդեցության գնահատումը, այլ նաև մյուս, ոչ պակաս կարևոր բաղադրիչի՝ ընդերքի ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և պահպանումը, ինչպես նաև կրկին ոչ պակաս կարևոր՝ մարդու առողջությունը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում պարտադիր դիտարկման են ենթակա օբյեկտի երկրաբանական կառուցվածքը, հանքային մարմինները՝ կառուցվածքային ձևեր, օգտակար հանածոները, ընդերքի պահպանության ու օգտագործման վերաբերող այլ բնութագրեր, ինչպես նաև հանքարդյունաբերական գործունեության արդյունքում ձևավորվող թափոնների կազմը, վտագավորության աստիճանը, ծավալը, օգտագործման, վերամշակման, պահեստավորման ու պահպանման վերաբերյալ մի շարք խնդիրներ:

1. Առաջին խնդիրը վերաբերվում է լեռնահանքային արդյունաբերության կազմակերպման թույլտվությանն ու համապատասխան փորձաքննության կազմակերպմանը:

Համաձայն ՀՀ ԼՄՕ 7-րդ հոդվածի ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում իրականացվում են ընդերքաբանական, շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության փորձաքննություններ:

Նշվածներից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները, տեղն ու նշանակությունը փորձաքննության անցկացման և վերջնական որոշման կայացման գործընթացում: Սակայն փաստաթղթային փաթեթների ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ-ում նշված փորձաքննություններից իրականացվում է կարծես թե միայն ՇՄԱ փորձաքննությունը, իսկ մյուս երկուսը մասամբ կամ առհասարակ չեն իրականացվում: Հանրաքայտնաբերական գործունեության ծավալման համար համապատասխան պայմանագրի կնքման հիմքում պետք է դրված լիներ նշված երեք փորձաքննությունների անցկացման արդյունքում կայացված մեկ միասնական որոշումը: Անթույլատրելի է փորձաքննությունների առանձին անցկացումը, քանի որ յուրաքանչյուր դեպքում արդյունահանող ընկերությունների կողմից ներկայացվում են մեկը մյուսից անկախ փաստաթղթեր, որոնցում հանքավայրի շահագործման պայմանները, դրանց համապատասխան ՇՄԱԳ և տեխնիկական անվտանգության պահպանման պահանջները կտրուկ տարբերվում են միմյանցից:

Փորձաքննության ոլորտում հատկապես խոցելի է համարվում ընդերքաբանական փորձաքննությունը: Վառ օրինակներ են հանդիսանում Արմանիսի, Շամլուղի, Սոթքի, Թուխմանուկի և մի շարք այլ հանքավայրերի շահագործման աշխատանքային նախագծերի ՇՄԱԳ փաթեթները, որոնցում ընդերքի, հատկապես օգտակար հանածոների քանակության վերաբերյալ բերված տեղեկատվությունը մեր կարծիքով չի ենթարկվել համապատասխան և լիարժեք ընդերքաբանական փորձաքննության:

Ընդերքաբանական փորձաքննության ենթակա են ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկության արժանահավատությունը, օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաներն ու պաշարները, ինչպես նաև արդյունաբերական նշանակությունը կորցրած կամ հետագա աշխատանքների արդյունքում չհավաստված պաշարների դուրսգրումը: Ընդերքաբանական փորձաքննության նպատակն է գնահատել տեղեկության արժանահավատությունը, հաստատել կոնդիցիաներն ու պաշարները, եզրակացություն տալ պաշարների դուրսգրման հիմնավորվածության մասին:

Ընդերքի տրամադրումն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով թույլատրվում է միայն դրանում պարունակվող պաշարների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ընդերքաբանական փորձաքննությունից և ուսումնասիրված ու գնահատված պաշարների քանակը և որակը սահմանված կարգով հաստատվելուց հետո: (ՀՀ ԼՄՕ, հոդված 7)

Հայտում առկա փաստաթղթերը ներկայացված են մի շարք սխալներով, պարունակում են հատկապես պաշարների վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկատվություն, հանքավայրի արտադրողականությունը չի համապատասխանում ֆաբրիկայի արտադրողականությանը, տարածքի սպարների և պոչամբարի պատվարի շերտերը նկարագրվում են մեկ միասնական համակարգով և անհասկանալի, նյութը ներկայացված է տարբեր լեզուներով:

Եվս մեկ անգամ փաստում է այն մասին, որ փորձագիտական եզրակացությունները արտագրություններ են աշխատանքային նախագծի հիմնական դրույթների, առանց լուրջ, խորը մեկնաբանությունների կամ գնահատումների իրականացման, ինչպես որ ենթադրվում է պետք է լիներ: Այն հարցերը, որոնք պահանջում են գնահատականներ, իրատեսականություն և այլն, եզրակացություններում շատ հաճախ չեն շոշափվում:

Սույն վերլուծությունն իրականացվել է ԵՊՀ Գայուն զարգացման կենտրոնի փորձագետների կողմից՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի 2016թ. «Աջակցել կառավարությանը և քաղաքացիական հասարակությանը՝ լուծելու շրջակա միջավայրին առնչվող հարցերը» ծրագրի շրջանակում: